

ՄԵԼԻ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՓԵՏԱԿԱՆ ԳԱԾԱԴԱՐԱՆ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մեջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ԲՈՎԱԼՆԵՆԻ ԹԵՄԱԿԱՆ

Բաղկանանքները. Ներքին Տեսչական
Թիֆլիս. Ն. Միխայիլովի. Աշխատելով մեծ աշխատանքի
Փաստեր և մարքեր. Ներքին Տեսչական. Արժ. Ս. Մ.
Քիմ ՏԵՍՈՒԹԻՆԵՆ. Հեռաւոր Արեւելքում. Պա-
տերազմի շուրջը. Արաւսի լուսին. Հեռ. Ս. Մ.
Գիւրգի. ՏԵՍՈՒԹԻՆԵՆԻ ԹԵՄԱԿԱՆ:

ԲՈՎԱԼՆԵՆԻ ԹԵՄԱԿԱՆ

Այն ժամանակ, երբ ամբողջ աշխարհի
ուշագրութիւնը ուղղված է դեպի հեռա-
ւոր Արեւելքը և դեպի այնտեղ կատարվող
խոշոր երկնայինները, յուզիչ տեղեկութիւն-
ներ են ստացվում Բաղկանանքի թերա-
կողմից, ուր անցնելու տարի մակեդոնական
շարժման պատճառով թափվելու շատ ա-
րեւելի և տեղի ունեցան սարսափելի դէպ-
քեր:

Եւրոպայի կողմից երկու խոշոր պե-
տութիւններ՝ Ռուսաստանը և Աւստրո-
Ունգարիան՝ միջամտեցին մակեդոնական
գործի մէջ և ստիպեցին թիւրքացի կա-
ռավարութեանը ընդունել ընթացիկ կա-
ռավարութեանը, որ պէտք է բաւարարութիւն
տաւր, մակեդոնացիներին պահանջներին մի
որոշ չափով: Թիւրքացի երկար ժամանակ
յամատում էր և առարկութիւններ էր
առաջ բերում թէ շատ դժուար է իրա-
գործել պետութիւնների պահանջը, որով-
հետեւ բաւարարութիւն տալով Մակեդո-
նիայի քրիստոնեայ ազգաբնակչութեանը,
մեծ յուզումներ է առաջ գալիս մահմեդա-
կան ազգաբնակչութեան և մանաւանդ նրա
այն մասի մէջ, որ բնակվում է Ալբա-
նիայի լեռներում և հովիտներում:

Եթէ Թիւրքիան վերջ է վերջոյ չըն-
դունէր եւրոպական երկու պետութիւն-
ների առաջարկը, պէտք է ծագած խո-
վովութիւնները վերջնապէս անդ ապստամ-
բութեամբ և Բոլղարիայի պատերազմա-
կան միջամտութեամբ: Մակայն Թիւրքիան
խոստացաւ այս անգամ ճշտապահ լինել
և յանձն առած բարենորոգումները իրա-
պէս մտցնել: Որքան փոքր և սահմանա-
փակ լինէին ընթացիկները, այնուամենայ-
նիւ նրանք մի փոքր թիւրքութիւն կարող
էին տալ Մակեդոնիային, ուստի ապա-
մանական խմբերը յետ քաշվեցին, մի-
այն մի հիմնական պայման դնելով, որ
Թիւրքիան դարձեալ չը խաբէ, այլա-
պէս նրանք սպառնում էին, որ նորից
կը դիմեն զենքի և առաջ կը բերեն աւե-
լի մեծ խառնակութիւններ, քան անցեալ
տարի:

Մինչև վերջին շաբաթները լուրերը
մեծ մասամբ հանգստացնող էին և Թիւր-
քիան մի որոշ աստիճանով, թէև դան-
դաղ, բայց կարծես յաջողութեամբ, մշա-
կում էր գործնական բարենորոգումների
ծրագիրները: Մակայն վերջին շաբաթներս
սկսվում է նկատվել դարձեալ ձգձգումների
և յապաղումների մի հոսանք թիւրքական
վարչական մարմինների շրջանում:

Շատ սխալ կան է Թիւրքիան, եթէ կը
կարծէ թէ Ռուսաստանի գեղոված լինե-
լը հեռաւոր Արեւելքում, կարող է հիմք
ծառայել նրա համար յետ կենսալու իր
տուած խոստանալից և նորից կասկածի
ենթարկելու բարենորոգումների խնդիրը:
Թիւրքիան չը պէտք է մոռանայ, որ ըն-
թացիկները իրագործումը պահանջ է ամ-
բողջ եւրոպական հասարակական կարծի-
քի կողմից և որ Ռուսաստանի ու Աւստրո-
Ունգարիայի միջամտութիւնը կատարվել
է ոչ նուաճողական նպատակներով, այլ
եւրոպական պետութիւնների և մարդա-
սիրութեան անունով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆԵՆ

Ն. ՄԻԽԱՅԻԼՈՎԻ

Մայրաքաղաքի լրագիրները լուր բերին, որ
յունվարի 27-ին, Պետերբուրգում յանկարծա-

կի վախճանվեց ժամանակակից ռուս առաջին
հրապարակագիրը—ըննադատ Ն. Կ. Միխայիլով-
կի: Այդ անակնկալ մահը չափազանց մեծ մի
կորուստ է, որ կրում է ռուսաց մամուլի և
գրականութեան առաջնորդ մասը: Միխայիլով-
կին ներկայացնում էր մի ամբողջ ուղղու-
թիւն, մի դրօշակ, որի շուրջը խմբված էին
ռուսաց լաւագոյն գործիչների նուիրական ա-
ւանդութիւնները:

Ընթերցող հասարակութեան մէջ շատ քիչ
կը լինեն այնպիսի խաւեր, որոնց ծանօթ չը
լինի Միխայիլովի անունը, որ անգլին ժո-
ղովրդականութիւն էր վայելում իբրեւ առաջ-
նակազգ գրող, փայլուն տաղանդ և գեղեցիկ
մտածող: Նրա գրութիւնների վրա կրթվել են
մի շարք սերունդներ, որոնց համար Միխայ-
իլովկին եղել է առաջնորդ, դեկավար, ոգեւո-
րութեան աղբիւր:

Միխայիլովին վախճանվեց 61 տարեկան
հասակում: Նա ծնվել է 1841 թականին խուլ
գաւառում աղքատ ծնողների ընտանիքում:
Բարձրագոյն ուսում նա չը կարողացաւ ա-
ւարտել, բայց և այնպէս, նա իր բնական
խելով, ինքնակրթութեամբ ձեռք բերեց այն-
պիսի բարձրագոյն հմտութիւն, որ նոյն
իսկ գիտութեան (սոցիոլոգիայի) մէջ դարձաւ
յայտնի հեղինակ: Միխայիլովին 60-ական
թականներին փառաւոր շրջանի պատու է: Նա
սկսեց գրել այդ ժամանակներում, բայց նրա
սկզբնական գործունէութիւնը այդ սապաղեղում
շատ անաջողութիւնների հանդիպեց: Իբրեւ
սկսնակ, իբրեւ աղքատ մարդ՝ նա երկար ժա-
մանակ չէր կարողանում մի փոքր ի շատէ
տանելի կացութիւն ապահովել իր համար և
ստիպված էր քաղցած կեանք վարել: Նա ինքը
նկարագրութիւնը գեղեցիկ կերպով ապա-
ցուցանում է. թէ որքան քիչ է ազդում նիւ-
թական անապահովութիւնը այնպիսի ուժեղ
ընտրութիւնների վրա, որոնք գրում են ի-
րանց կոյունք, որոնք համակված են լինում
մի յայտնի գաղափարի նուիրվելու տենչան-
քով:

Տաղանդը ճանապարհ է հարթում Միխայ-
իլովի համար և նա տեղ է գտնում ռուսաց
առաջնորդ ամսագիրների մէջ: Այդ ժամանա-
կից էլ նա յայտնի է դառնում ընթերցող հա-
սարակութեան և սկսում է մտնել այն ա-
մենը, ինչ պատասխանութիւնը նուաճել էր
ռուսաց հասարակական կեանքի մէջ XIX դա-
րի ընթացքում: Բայց Միխայիլովին հաստատ
ու անխախտ մնաց իր ուղղութեան, իր հա-
մոզմունքների մէջ: Նա ոչ միայն չը թուա-
ցաւ, այլ, ընդհակառակը, տոկուն ու յամու
կերպով կուտում էր խաւար հոսանքների դէմ,
միշտ բարձր պահելով մարդկայնութեան, խղճի
և ազատ մտքի դրօշակը: Հարուստները, որոնք
թափվում էին յետադիմութեան շարքերից,
նրան չը շարդեցին. նա ինքը յաղթող դուրս
եկաւ կոյունքի միջից, նրա խոշոր տաղանդը ոչ
միայն պահպանեց նրա պատուաւոր դիրքը,
այլ ոգևորեց միւսներին էլ շարունակելու նոյն
կոյունք յամուն արդարութեան և համամարդ-
կային գաղափարների:

Դա մի մարանչող էր, որ յոգնել չը գիտէր:
Քառասուն տարի նա գործեց գրականութեան
մէջ և ներկայացնում էր զարմանալի բեղմնա-
ւոր, միշտ թարմ, սուր դիմող գրողի տիպը,
մի տիպ, որ այնքան հազուադէպ է գրակա-
նութիւնների մէջ: Միխայիլովին մեռաւ գրելը
ձեռքին: Վերջին երկու տասնամակներին ըն-
թացքում նա գրում էր բացառապէս գրական-

ըննադատական յօդուածներ, որոնց մէջ լայն
չափերով ծաւալվում էր համակրելի ու գեղեցիկ
հրապարակագրութիւն: Մի գրող էր Միխայ-
իլովկին, որը միշտ կապված է լինում կեանքի
հետ, որին յուզողը, ոգևորողը այն առօրեայ
երեւոյթներն են, որոնք ընդունում են հասա-
րակական մտքի և գաղափարների աստիճանը:
Եւ այդպիսով նա ազդում էր, նրա ձայնին ա-
կանջ էր դնում ամեն մէկը, նրա կարծիքը
սպասվում էր ամեն մի գրական-հասարակա-
կան խոշոր հարցի մէջ:

Միխայիլովին մեծացել է Նեկերասովի, Սալ-
տիկովի և նրանց նման գրողների շրջանում.
նա եղել է «Отечественныя Записки» գլխաւոր
աշխատակիցը և յետոյ նաև խմբագիրներից
մէկը, իսկ 1890-ական թականներից խմբա-
գրում էր «Русское Богатство» ամսագիրը,
որ յայտնի է ռուս հասարակութեան իր լրջու-
թեամբ և հարուստ բովանդակութեամբ:

Մի կարճ յօդուածում անկարելի է պատ-
կերացնել բառաստեղծ տարիների անընդհատ
գործունէութիւնը: Միխայիլովի գրութիւննե-
րը զանազան ժամանակ լոյս են տեսել առան-
ձին հրատարակութիւններով, իսկ ներկայումս
կայ նրա աշխատութիւնների լիակատար ժո-
ղովածուն, որ ռուս լիտերատուրայի գրագա-
րաններում ամենապատուաւոր տեղն է բըւ-
նում:

Ի վերջոյ մենք կը բերենք ռուսաց առաջա-
դէմ և պատկառելի լրագրի, «РУССК. ВѢДОМ.»-ի
խօսքը Միխայիլովի մահվան առիթով: Ահա
ինչ է նա ասում:

«Թէ որքան անգին է այդ կորուստը ռուսաց
գրականութեան, ռուս հասարակութեան համար, այդ
կը գտնուի ամենքը, որոնք համար մի գրականութեան
եւ մեր հասարակական ինքնաճանաչութեան զարդա-
ցումը մի գրողի մայն է: 40 տարով ընթաց-
քում Միխայիլովին կանոնաւոր ռուսաց գրականու-
թեան առաջին շարքերում, ռուսականութեան հասա-
րակական զարգացման օրէնքները, բայցադրելով ան-
հատի դերը պատմութեան մէջ, բնական պատուի և
խղճի հարցերը, արձանագրելով հասարակական միտքը
և եւանդաւոր ինքնագործունէութեան կոչ անելով...
Այն աններ, ինչ այսպէս կամ այնպէս տրամադրում
էր անդրաժամանակ, ինչ կարող էր թուականը ձեռք բեր-
այն ամենը, ինչ ցոյց էր տալիս թէ անցած եւ ա-
պագին են առանձին անհատի ջանքերը, գտնում
էր նրա մէջ բարձր տաղանդաւոր, ուժեղ եւ անվախ
հակադիր: Հասարակութեան անտարբերութիւնը
դիպի իր վիճակը այն ժշնամին էր, որին նա հաւա-
ծում էր ամեն տեղ... Շնորհիւ իր համոզմունքների
ամրութեան ու պարզութեան, շնորհիւ մտքի խիղճի
հաւանութեան և հարուստ գրական տաղանդի, Մի-
խայիլովին դարձաւ մի կենսաբան, որի շուրջը խմ-
բվում էին ռուսաց մտքի լաւագոյն ձգտումները...
60-ական թականների երկրորդ կեսից ռուսաց գրա-
կանութիւնը չէր ճանաչում մի հրապարակագիր, որ
ունենար այնպիսի ուժեղ և երկարատև ազդե-
ցութիւն ընթերցողների վրա, ինչպէս Միխայիլովին:
Եւ դրա պատճառը ոչ միայն տաղանդն էր, ոչ միայն
լուստը միտքը, այլ և մտքի անընդունելի եւ նրա
յամուն տաած գործի մեծունիւնը:

Ահա ինչ հազուադէպ ուժ կորցրեց ռուսաց
գրականութիւնը: Մեր ուսանող երիտասար-
դութիւնն էլ Միխայիլովի գրութիւններով
ոգևորվել է, նրա կարգի խօսքը ազդեցութեան
տակ որոշ աշխարհայեցողութիւններ ու դա-
րափարական մտազատկերներ է մշակել իր
համար: Եւ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել.
մարդկային լաւագոյն մտքերը միայն իրանց
ազդել շրջանին չեն պատկանում: Մեր ցաւն
ենք յայտնում ռուս գրականութեան կրած այս
զաւն և մեծ կորուստի համար:

ԱՆՔԱՏՆՈՒ ԹԷ ՄՈՒՐԱՆ.

«Մշակ»-ի ամեն մի համարում երևում են
1-2-3 յայտարարութիւններ դասեր, գրագրու-
թիւն, որն է գործ խնդրող երիտասարդ պա-
րաններին և օրիորդների կողմից: Աստիճանա-
բար աճում, դժուարանում է գոյութեան կուր-
հարցը մեր երկրում ևս: Մեր նախապետական
բարբեր տեղի են տալիս աւելի լայն, աւելի
արագ բաղադր. գործնական կեանքին: Մի և
նոյն պաշտօնի համար արդէն սկսում են ե-
րկու մի քանի թեկնածուներ: Անցան այն
երջանիկ ժամանակները, երբ գործ ունեցող-

ներն էին մարդիկ որոնում. այժմ մարդիկ են
գործ որոնում և այն էլ ինչպէս...

Դժուար չէ գուշակել մեր կեանքի զանազան
ճիւղերի ապագան: Դա յետաճող ազգերի ու
հասարակութիւնների միակ առաւելութիւնն է:
Առաջատար ազգերը—Անգլիացիները, Ֆրան-
սիացիները և այլն—իրանց ճակատով էին բաց
անում իրանց ուղին: Նրանց ապագան գուշակե-
լը շատ դժուար էր: Իսկ մենք, ազգերի ու հա-
սարակութիւնների ետեւ շարքերում կանգնած-
ներս, մենք՝ լուսաւոր մարդկութեան պոչը
կազմող յետաճող ժողովուրդներս շատ հեշ-
տութիւնով կարող ենք նախատեսել մեր ա-
պագան:

Եւրոպական ջղային, ետական ու սրընթաց
կեանքը թաղաւորելու է և մեղանում: Ամեն
մի բացվող տեղի, ամեն մի պաշտօնի համար
գուրս են գալու հարեւրներով ու հազարներով
թեկնածուներ: Կրթվածների, նոյն իսկ բարձ-
րագոյն կրթութիւն ստացածների թիւն այն-
քան պէտք է աճէ, «մտաւոր պրոլետարիատ»
բանակն այնքան պէտք է զօրանայ, որ միջնա-
կարգ ու նոյն իսկ բարձրագոյն կրթութեան
զիջումները ձեռք բերին՝ մարդիկ ստիպված լի-
նին հասարակ մշակութիւն, գործարանի բան-
ւորութիւն անելու: Այն, ընչ չեն համարաբա-
նական բանւորներ, օրինակ՝ Իտալիայում:
Գոյութեան կուրսն այնքան պէտք է սուր կեր-
պարանք ընդունէ, որ բժիշկներ ու փաստա-
բաններ սովամահ լինին...

Պէտք է պատրաստվել այդ ապագայ սրվող
յարաբերութիւնների համար: Պէտք է արեօք
դէն գցել մեր ասիական համոզմունքներն
աշխատանքի տեսակների մասին:

Միջնակարգ կրթութիւն ստացած մի երի-
տասարդ աւելի լաւ է համարում սրան-նրան
աղաչելով մի երկու հատ հինգ բուրդխանոց
դասեր գտնել և ապրել, քան զնայ, արհեստի
և առետրի ասպարէզը մտնել, հետն էլ տանել
այնտեղ մի բէշ նորութիւն, թարմութիւն, շի-
տակութիւն: Բազմաթիւ գերմանականներ,
Ֆրանսուսիկներ, լեհուսիներ յանձն են անում
ընտանիքներում լինել ժամանաւոր վարժու-
ներ, իբր դաստիարակչութիւն ու բժնականք...
Դրանք ստանում են անգլին ուսմանը...
Իսկ դրանց կողքին մեր դիմադրաւ աւարտած
օրիորդները մնում են սոված, անգործ, մի-
միայն 1—2 հինգ բուրդխանոց դասերով... Այդ
դասերն էլ նրանց տրվում են յաճախ իբր ո-
ղորմութիւն. Ինչո՞ւ: Որովհետեւ մեր երիտա-
սարդ սերնդի գլխում դեռ ևս մնացել են
«պատուաւոր» և «անպատու» աշխատանք կա-
տեգորիաները, ասիական հակացողութիւն-
ները:

Վերջերս Բագուի մեր յայտնի երիտասարդ-
ներից մէկը գիմել է Թիֆլիսի յայտնի հասա-
րակական դերը վայելող կանանցից մէկին և
խնդրել, որ անական հայ վարժուհիներ և բժ-
նանք ուղարկէ Բագու 5-6 պատուաւոր ու
յարգված ընտանիքների համար, լաւ ուղևոր
ու պայմաններով: Տիկինը գիմել է թէ ան-
ձամբ և թէ ծանօթների միջոցով մի քանի օ-
րիորդներին, պաշտօն առաջարկում: Ամեն տե-
ղից մեքենայ է ստացվում: Ինչո՞ւ: Հայ օրիոր-
դը համարում է անվայել բժնակ, տնական
դաստիարակչուհի լինել... դա անպատու աշ-
խատանք է... Իսկ վարդ նա քան անգամ կը
խնդրէ, կաղաչէ իր ծանօթներին, որ 5 ռուբ-
լիանոց մանաւոր դասեր գտնեն կամ տան
նրան իբր շնորհ, իբրեւ ողորմութիւն:

Ժամանակ է թողնելու այդ հնացած հա-
կացողութիւնները, ժամանակ է աւելի նոր
հայեցակէտ կազմելու աշխատանքի մասին:
Գնացէք և մտէք ընտանիքները, սովորեցրէք
ձեր գիտեցածները և պատուաստեցէք բարի
զգացմունքներ մատաղ մանուկներին:

Նախա.

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՄՏՔԵՐ

Թատրոնական սեզօնը վերջանալու մօտ է:
Մի ներկայացումից յետոյ, մեր դերասանական
խումբը կը ցրվի արդէն, գաւառներում շարու-

նաեկելու համար իր բնական գործունէութիւնը:

Մենք չը գիտենք, բնականաբար, թէ մեր գերասանները ինչ խաղացանկով ձեռք պիտի առնեն գաւառներէ ճանապարհը: Բայց, յոյս ունենալով, որ նրանք թիֆլիսում կը թողնեն այն մի շարք պիէսները, որոնք մի թիւրիմացութեամբ Արտիստիքականի բնական լոյսը տեսան:

Թատրոնի իսկական կոչումը՝ մեղանոցում դեռ եւ չէ աղաւաղված: Նա մեզ համար ամեն բանից առաջ մի դպրոց է, մի ազատ դպրոց ամեն հասակի, սեռի ու դասակարգի կրթութեան յատկացված: Եւրօպական, բարդ կազմակերպութիւն ունեցող հասարակութիւններէ մէջ, թատրոնը, ինչպէս նաեւ այլ դաստիարակչական գործօնները՝ մամուլը, գրականութիւնը, դարձել են ոմանց ձեռքին շահագործումի միջոցներ: Մենք չենք կարող նրանց հետեւի և չպէտք է հետեւնք: Եւ արդէն, եթէ այդ հասարակութիւններէ մէջ կայ թեթեւ թատրոնը, անիմաստ ու անպէտք թատրոնը, գոյութիւն ունի և լուրջը, իմաստալիցը, ճշմարտապէս գեղարուեստականը: Եթէ այն գիշեր, օրինակ Պարիզում մի բնի միայն ներկայացվում է «Ջալա», «Երկու դեսպաններ» և այլն, մի ուրիշ բնից նոյն գիշերը կարելի է տեսնել «Կապիտալ» պատմահանրագիտական, «Կոսմոս» օրագրական, «Նիդալա» քաղաքական, «Փողի» հեղուկ, և այլն: Այսպէս որ Եւրօպայում եթէ չարիք կայ, բարիքն էլ կողքին է. թող ընտրէ թատերասէրը իր բնական հակումներէ համեմատ: Իսկ մեր մէջ այդ ընտրութեան ազատութիւնը չունենք:

Պիէսներէ ընտրութեան հարցից յետոյ, երկրորդ՝ գլխաւորը կ'ըստ լեզուական խնդրին է, որի մասին յաճախ է խօսվել մեր մամուլի մէջ և որքան էլ որ խօսվի դարձեալ քիչ է: Ուրովհետեւ բացի հայ բնից, աշխարհի վրա ոչ մի ազգի բնի կարող չեն գտնուի, որտեղից չը հնչէ կանոնաւոր լեզու: Յանգամայն լինի թարգմանիչներէ կամ թարգմանիչներէ միևնույն է. պէտք է վերջ դնել այդ ըմբոստացուցիչ դայթակցութեան: Ու՛մ համար գաղափար է, թէ հայ թատրոնի յաճախորդներէ մեծ մասը կանոնաւոր լեզու չը գիտէ: Արդ, մեր ներկայացուցիչները՝ փոխանակ ժողովրդին սովորեցնելու իր չը գիտցածը, փոխանակ նրան ընտելացնելու մայրենի լեզուի հետ, նրան մղում են վրա տալու իր իմացած լեզուական ողորմելի հմտութիւնը:

Պիէսներէ ընտրութեան և լեզուի կրկին հարցերը շատ հեշտութեամբ կը կարգադրվեն, եթէ մի կողմից՝ վարչութիւնը կանոնաւոր կերպով հետեւէ Եւրօպայի թատերական շարժումին և միւս կողմից՝ արժանի համարված պիէսները վարչութիւնը ինքն անձամբ յանձնէր ձեռնարկ թարգմանիչներէ: Իսկ գրախոսները կարգադրված թարգմանութիւնները, բացարձակապէս անհրաժեշտ է, եթէ պիէսը արժէք բեր թարգմանիչներէ համար: Եւրօպայի թատերական շարժումին հետեւելու ամենակարգ միջոցը բաժանորդագրվելն էր թատերական հանդէսներին: Ինչպէս մինչև հիմա չէ գիտվել այդ միջոցին: Կարծեցեալ խնայողութիւնները յաճախ ամենամեծ շոյալութիւններն են:

Տիգրան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Հանդէս Ամսօրեայ»-ում կարդում ենք, որ Պորտուգալացի լեզուագէտ Պ. Պիէրէյրան Լիսաբոնում հրատարակել է մի 42 երեսանոց գրք՝ քոյի, որի մէջ առաջ է բերված Գրիգոր Լուսաւորչի վարքը եթովպական լեզուով: Դրա ընդգրկները գտնվում են Բերլինի և Լոնդոնի պետական մատենադարաններէ: ձեռագիրներէ մէջ, որից է արված է արտաստութիւնը, հետը միասին և պօրտուգալերէն թարգմանութիւնը:

Պետերբուրգում՝ Յունվարի 27-ին, Հեռաւոր Արեւելքում յարաբերութիւնները բարդվելու լուրը տարածվելուն պէս՝ հրապարակի վրա եղած գլխաւոր շտաբի հրատարակած ըրոր ծախու բարոէնները գնվել են. այժմ համարեն այլ ևս Հեռաւոր-Արեւելքի բարոէններ չեն ֆիացել գրավաճառներէ մօտ:

Պատերազմական գործողութիւններէ բնմը գնացող կրտսեր բժիշկները ամսական ոտճիկ կը ստանան 500 ռ., իսկ ուղևորութեան ծախս 900 ռ., վերադարձնող բժիշկական ակադէմիայի ուսանողները 125 ռ., ոտճիկ կը ստանան ամսական, իսկ ուղևորութեան ծախս 150 ռ.: Ֆէլդշէրները—75 ռ., ոտճիկ, իսկ ճանապարհի ծախս 125 ռուբլի:

Կովկասեան ուսումնարանական շրջանի Պ. Հոգաբարձուն իր և իր իրաւասութեան տակ եղած ըրոր դպրոցներէ կողմից աշողութիւն մարթոյ մի վերին աստիճանի զգացված հեռագիր է ուղարկել Հեռաւոր Արեւելքի փոխարքայ գեներալ-ադիւտանտ Ալէքսեյովին, որից և ստացել է հետեւեալ պատասխանը. «Ինչ յանձնված գործի և նաւատորմի ըրոր ծառայողներէ հետ միասին անկողն շնորհակալութիւն եմ յայտնում Ձերդ գերազանցութեան, ուսուցանողներին և Կովկասի աշակերտներին մեզ դէպքի առաջիկայ ընթացողութիւններն արած բարեմարթութեան համար»:

Պետերբուրգի ծովային թանգարանը, ուր գտնվում են ուսումական ըրոր հին և նոր նաւերի փորձիկ մօդելները (կաղապար), վերջին օրերս, մայրաքաղաքի լրագրիչներէ ասելով, անհազին հասարակութիւն է գրաւում: Բոլորը գնում են դադարաւոր կազմելու, տեսնելու այժմ Եւրօպայի գէ՛մ ծովային պատերազմում մասնակցող հայրենի նաւերի մանրիկ պատճէնները:

Առաջիկայ գարնանը կը սկսվեն Պետերբուրգի նաւամատոյցը բարեփոխելու աշխատանքները. այնքան պէտք է լայնացվի և խորացվի նա, որ արտասահմանեան ամենախոշոր նաւերն անգամ կարողանան ներս մտնել և այնտեղ խաւիսի գցել:

ԿԱՐՍԻՑ. մեզ գրում են յունվարի 27—30-ին. «Երևանի նահանգական դատարանը իր Կարսի բաժնում» պ. Բակալօի նախագահութեամբ, պ. պ. Լեւկովի և Գիւրեղուովի անդամակցութեամբ դռնիակ ընենց Կարսի ընակիչ 31 հաւաքով գործը, որոնք մեղադրվում էին պատժական օրէսգրքի 263-դ յօդ. հիման վրա: Մեղադրում էր դատախազ Գլազովը. պաշտպանում էին Սօսկիւպի երբեւալ հուսատար մատարնի Մարեանովը, Մուրադովը և Սօսկիւպի Սոսկիւպի, օգնականներ Սախաւով և Գեղորովը՝ թիֆլիսից: Դռնաց յայտարարված վճիռով մեղադրվածներէ 25-ը 266-դ յօդուածով դատապարտվեցին. 1) 2 քահանաներ 2 տարի և 6 ամիս կալանաւորութիւն ուղղիչ բաժնում բանտարկութեան (266 յօդ. I մաս) 2) 10 հոգի—2 ամիս տարի (նոյնպէս I մաս 266 յօդուածով.) ըրորն էլ ըրոր իրաւունքներէց զրկվելով: 3) 3 հոգի դատապարտվեցին (266 յօդուածի I մաս) 1 տարի 3 ամիս բանտարկութեան, առանց իրաւունքներից զրկվելու: 4) 6 հոգի 266 յօդուածի III մասով, դատապարտվեցին 3 ամիս բանտարկութեան՝ առանց իրաւունքներից զրկվելու: 5) 4 հոգի—266 յօդուածի III մասով—2 ամիս բանտարկութեան, 6) 6 հոգի արգարացան»:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ. մեզ գրում են յունվարի 31-ին. «Երևանի նահանգական դատարանի Ալէքսանդրօպօի բաժինը պ. Բակալօի նախագահութեամբ, պ. պ. Գեղմանի ու Գիւրեղուովի անդամակցութեամբ՝ դռնիակ ընենց Ա. մատուռում և Տէր-Մինասեանի գործը, որոնք մեղադրվում էին Ալէքսանդրօպօի աւագ գաւառապօյ Դարդիմանովի դէմ սպանութեան փորձ կատարելու մէջ: Մեղադրում էր դատաբանի դատախազ Գլազովը, պաշտպանում էին երբեւալ հուսատար մատար Մալեանովը (Սօսկիւպից) և Տիգրան Յովհաննիսեան (Թիֆլիսից). Երկու մեղադրվողներն էլ արգարացան»:

ԿԱՐՍԻՑ. մեզ գրում են յունվարի 30-ին. «Երևանի նահանգական դատարանի Կարսի բաժինը պ. Բակալօի նախագահութեամբ՝ պ. պ. Գիւրեղուովի և պատուաւոր դատաւոր Յիւրիսկու անդամակցութեամբ դռնիակ ընենց Ուրուշ գիւղի 4 բնակիչներէ գործը, որոնք մեղադրվում էին պատժական օրէնսգրքի 264 յօդուածի հիման վրա: Մեղադրում էր դատախազ Գլազովը — պաշտպանում էին՝ Սօսկիւպից երբեւալ հուսատար մատար Մուրադովը և երբեւալ հուսատար մատար օգնական Սախաւովը թիֆլիսից: Դռնաց յայտարարված վճիռով 2 մեղադրվածները մեղաւոր ճանաչվեցին 285 յօդուածով և դատապարտվեցին մէկը—մի տարով, միւսը 10 ամիս բանտարկութեան, իսկ ֆիացած 2-ը արգարացան»:

ՀԻՆԴԻՍԻՄԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 23-ին համառ կերպով տօնվեց Հինդիսի քահանայ տէր-Դաւիթ Քէշիշեանցի ընթացողութեան քահանայութեանը Պէտք է ասած, որ դէպքը եղակի է հինդիսիցիներէ կեանքում. առաջին անգամ է, որ այդ ժողովուրդը իր երախտագիտական

զգացմունքը արտայայտելու համար հրապարակ է գալիս. պատիւ նրան... Հանդէսի օրը նախ պատարագից յետոյ տէր Դաւիթը հոգեհանգիստ կատարեց տեղական հայ հասարակութեան ըրոր ննջեցեալներէ յիշատակին: Դժբաղդաբար, պատարագին ներկայ էին մի շուխտ և մի կէտ հայեր: Դժբաղդակցութեանց յետոյ հանդէսի տեղում հաւաքված էին քաղաքի աշխի ընկնող հայերը և բաւական թուով ունեւոր: Հանդէսը բացեց Ն. Նահապետեանը, որը Բնասարաբխայի թեմակալի կողմից շնորհաւորելով յօրեկարգի 25-ամեայ քահանայագործութիւնը, շնորհեց նաև հասարակութեան պարտաճանաչութիւնը այս կէտում: Դրանից յետոյ կարդացվեց մի ձառ, որից յետոյ երէցիկները հասարակութեան կողմից յօրեկարգին մատուցեց գրամական նըպաստով մի ծրար: Յօրեկարգը յայտնեց իր շնորհակալութիւնները: Նախաճաշը տեւեց մինչև 2½, որից յետոյ հիւրերը ցրվեցին: Այստեղ նախ գովելի է միանգամայն Հինդիսի հայ հասարակութեան մեծամասնութեան բուն ընթացքը իր քահանայի յօրեկարգի վերաբերմամբ այն տեսակէտից, որ նա գտնէ այս դէպքում կատարեալ մոռացութեան տուեց իր և քահանայի միջև անցեալում պատահած զանազան տարաձայնութիւնները, որոնք փոխադարձ անհամեմալութեան արդիւնք են եղել... Երկրորդ՝ այս յօրեկարգում որը մի բանի մարդկանց աշակցութեան արգարից էր—տեղական հայերը մի փոքր գիտակցութիւն կունենան իրանց հասարակական այլ պարտաւորութիւնների վերաբերմամբ»...

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՀԵՌԱՆՈՐ ԱՐԵՆԵԼԻՔՈՒՄ

Ե Ա Պ Ն Ե Ա

(շարունակութիւն)

Ահա մի ժողովուրդ, որը մի սերունդի կենսի ընթացքում՝ բուն հոսանքով և ազգային բնորոշումով ոգևորութիւնով ամենակարգ ժամանակում անցաւ միջնադարեան խաւարից XIX-դ և X դարերի գիրքը: Մարգարային պատմութիւնը երբեք, ոչ մի տեղ երկրագնդի վրա չէ տեսնել այդպիսի խոր փոփոխութիւն այդքան կարճ ու չնչին ժամանակում: Կառավարութեան եղանակը, սեփականութեան ձևերը, դատական գործը, վարք ու բարքերը, օրէնքները, նիստ ու կացը, գիրք, մամուլ ու գրականութիւնը—մի խօսքով՝ ամեն ինչ այժմատեան փոփոխութեան ենթարկվեցին: Մի բանի սոցիոլոգիան կարծում են, որ այդքան արագ կատարված փոփոխութիւնները չեն կարող լինել ոչ խոր, ոչ էլ իւրացված ժողովրդի կողմից. նրանք համարում են այդ բեթօրմները վերակէ լաւ ուսումնասիրած չը լինելով եապօնական կենսի անտեսական պայմանները, նըրանց դասակարգերի կատարի կոչները—և ենթադրում են, որ դա լոկ մի արտաքին փայլ է, որ շուտով կարող է չընթանալ:

Բայց այդ պեսիմիստ ենթադրութիւններն իրականանալու դեռ ոչ մի հաւանականութիւն չունեն: Բայց այդ պէսիմիստ Միկալօի կառավարութիւնը ծնեցրին ազնուականների և բօնդաների մէջ: Բուդդայականները փորձեցին սպանել Միկալօին իր պալատում՝ 1872 թ. մարտի 26-ին, բայց աշողութիւն չունեցան: Բօնդաները, զայմիօսները և սամուրները մի ըստի փորձեցին արին ապստամբելու և հին կարգերին վերադառնալու. այս և այն տեղ կոտորեցին մի բանի տարնեակ եւրօպացիներ, բայց կարճ միջոցում Միկալօի կառավարութիւնը ջարդեց նրանց, սանձ գրեց և հպատակեցրեց: Նրանց այդ դիմադրութիւնը կրկնապատկեց կառավարութեան ետնքը և ժողովրդի սէրը դէպք լայն վերանորոգութիւն և քաղաքակրթութիւն:

Եւ եապօնական պրօգրէսի նաւը լայն բաց արեց իր ուժեղ առաջատաները. քամին աշող էր—նա յետեւ, գնդակից և երեւակայութիւնից էլ արագ սկսեց թռչել ու դեռ սլանում է առաջ: Յինդուական ծանր ու բարդ խնդրը չէ վախեցնում Եապօնային. նա ճարպիկ է՝ ամեն միջոցի գնում է: Նրան սպասում է մի փայլուն ու գեղեցիկ ապագայ, եթէ չընկնի պատերազմի ու գրաւումների կործանիչ, փտանալու ուղին:

Եապօնական սանձաւարութիւնը (1889 թ.) եապօնական կառավարութիւնը կազմեց մի մասնաժողով, որին և յանձնեց ուսումնասիրել Եւրօպայի և Ամերիկայի երկրներէ գաղափարաւարչական սիտեմները: Յանձնաժողովը կառավարչական սիտեմները: Յանձնաժողովը ճանապարհորդեց լուսաւոր երկրները, տեղի վրա ուսումնասիրեց ամեն տեսակ վարչական

ձևերը և վերադառնալով Տօկիօ, գեղեցագիր ներկայացրեց: Նա գանգաւորում էր այդ գեղեցագրում պետութեան պաշտօնեաների շոյալութեան և անհոգութեան դէմ. անհրաժեշտ էր համարում ընթացիկ նրանց թիւը, ենթադրել խիստ պատասխանատուութեան և հաշիւ պահանջել իրանց յանձնված գումարների համար: Բացի դրանից՝ յանձնաժողովը պահանջեց մամուլի և ժողովների ազատութիւն և կարծիք յայտնեց, որ բանակը մեծացվի՝ դառնայ 100,000 հոգի, իսկ նաւատորմը լինի առնուազը 20 նաւ, և այլն, և այլն:

1889 թ. փետրվարի 11-ին եապօնայում հրատարակվեց սահմանադրական վարչութիւն: Ահա նրա Սահմանադրութեան գլխաւոր հիմքերը: Օրէնսդիր իշխանութիւնը պատկանում է «Կայսերական ժողովին» կամ պարլամենտին, որը կազմված է 2 ժողովներից—ազնականների ժողովից և համայնքների ժողովից:

Օրէնսդիր ժողովի պատգամաւորների ընտրութեանը մասնակցելու համար պէտք է լինի 30 տարեկան և վճարել գտնէ 15 ինչ հոգային կամ եկամուտի հարկ (1 ինչ=96,87 կօպէկ):

Առաջին սահմանադրական միւնիստրութեան գլուխն էր գրաֆ Կուրատօն, իսկ աղատամիտ դիմադիր կուսակցութեան պարագլուխը՝ գրաֆ Գոտօն: Բայց Գոտօն կաշառվեց Կուրատօի տուած պաշտօնովը (պօստերի ընդհանուր կառավարիչ) և անցաւ կառավարութեան կողմը. կուսակցութիւնն այն ժամանակ հեռացաւ նրանից:

Սահմանադրութիւնը հրատարակած օրը եապօնական նախկին դեսպան Պիկինում և Լօնդօնում՝ և ժամանակի լուսաւորութեան միւնիստր 43 տարեկան Մօրիս մորթից մի 23 տարեկան Ֆանատիկոս շինթօստի ձեռքով՝ Այդ երիտասարդը՝ Նիշիո Բունշիքօ՝ կատարեց, երբ տեսաւ իդէ բաղաւոր, որ Մօրիս մտաւ Արևի տաճարը, առանց հօշիւները հանելու...:

Այժմ եապօնական պարլամենտի մէջ կան հետեւեալ գործող կուսակցութիւնները. 1) Պրօգրեսիւսներ (չափաւոր բարենորոգութիւններ պահանջող), 2) Լիբերալներ կամ ազատամիտներ—սա արմատական փոփոխութիւններ պահանջող կուսակցութիւնն է. 3) Ընդհանուր Դաշնակցութիւն—երկու նախընթաց կուսակցութիւնների միջին ճանապարհը բռնող մի ծրագիր ունեցող կուսակցութիւն. 4) Ապակենտրօնացման կուսակցութիւն, 5) Պանպաղտական և այլն, և այլն... և նոյն իսկ սօցիալիստներ գուտ եւրօպական մտքով:

Այժմ անցնենք Կօբէյին, Չինաստանին և Եապօնայի այս երկու երկրներէ հետ ունեցած յարաբերութիւններին:

Խաժակ

ՊԵՏԵՐԲՈՐՍԻ ԾՈՒՐՁՐ

Մայրաքաղաքներէ լրագրիչներում կարդում ենք «Ռուսաց Հեռագրական գործակալութեան» հետեւեալ հեռագիրները, որ և թարգմանում ենք ի լրումը «Մշակի» մէջ արդէն տպված հեռագիրներին:

Լօնդօն, յունվարի 29-ին (Րէյտեր): Այստեղի եապօնական դեսպանութիւնը ստացել է հետեւեալ հեռագիրը Տօկիօից. «Եապօնական եղադրան, որին ուղեկցում էին փոխադրական նաւեր, ճանդիկեց յունվարի 26-ին, Չեմուրօպօյի ճանապարհին «Կօբէյ» ծովանոց թընդանթաձիգ մակոյկը, որ դուրս էր գալիս նաւահանգստից: «Կօբէյ» յարձակողական դիրք բռնեց և կրակ բացեց եապօնական ականաւորակներ վրա. վերջինները բաց թողեցին երկու ականներ, որոնք նպատակին չը հասան: «Կօբէյ» վերադարձաւ իր առաջվայ տեղը: Յունվարի 27-ին եապօնական Էսկադրայի հրամանատարի ծովապետ Ուրին պաշտօնապէս առաւարկեց ռուսաց պատերազմական նաւերին թողնել Չեմուրօպօ նաւահանգիստը մինչև կէսօր. ծովապետը կցեց, որ այդ պահանջը չը կատարել կը ստիպէ նրան յարձակում գործել ռուսաց նաւերի վրա նաւահանգիստից: Առաւօտեան ժամը 11½-ին ռուսաց երկու պատերազմական նաւեր թողին նաւահանգիստը: Կոլոր տեղի ունեցաւ մօտակայ Արշիպէլագոսի մօտ: Թնդանթաձիգութիւնից յետոյ, որ տեւեց մի ժամ, մի ուսական նաւ յետ հանանջեց: Երեկոյեան դէմ ռուսաց կրէյսսէրը ջրատուր եղաւ կղզիներէ մէջ: «Կօբէյ» ծովապետ թնդանթաձիգ մակոյկը, իր վրա եղած պաշտօնից յետոյ, ծովի տակը ընկղմվեց: Երկու ընկղմված նաւերի սպաները և նաւաստիները ազատութիւն գտան Փրանսիական «Պատկալ» կրէյսէրի վրա: Եապօնացիները կողմից կորուստ չեղաւ: Եապօնական հիւպատ

տոնարանը ստացաւ յետոյ հետագիւր, որ յայտնում էր, թէ Չեմուլպո եւ ինչի կապովական չորս բառաւորն»:

Շանխայ, 29 յունվարի: Եւրոպացիները օգր պայթեցին մի կամուրջ Մանչուրիան երկաթուղու վրա. սպանված են 30 ուսներ:

Ֆրանկֆուրտ, (Վոլֆ). Frankf. Zeit. լրագրի Պետերբուրգի թղթակցի տեղեկութիւններէ համաձայն, եւրոպացիները բռնել են ճանապարհին Ռուսաստանի յիշատակագիրը բաժնի Բոգչինի և չեն յանձնել նրան:

Պարիզ: Պետերբուրգի Պորտ-Արտուրի ուղղութեամբ ճանապարհին եւրոպացիները ձեռքով լրագրի գիրքները նկատում են, որ եւրոպացիները իրաւորութեամբ են յանկարծական յարձակման իրանց ծրագիրը հակառակ միջազգային իրաւունքի և ուղղութեան են դարձնում այն բանի վրա, որ եւրոպական ղեկավար Լոնդոնում, Ռայնլանդի, դեռ դրանք երբ օր առաջ յայտնել էր ծովային կուր մասին:

Պորտ-Արտուր, 29 յունվարի: Այսօր, գիշերով, եւրոպացիները փորձեցին մի քանի անգամ փոխել Պորտ-Արտուրի մօտ, ծովածոցին դուրս, բայց նրանց բոլոր փորձերը անաշուղտնային:

Տոկիո: Կոկուի կիսապաշտօնական լրագրի գրքերով գերման-եւրոպական յարաբերութիւնները, ասում է, որ եւրոպացիները պէտք է արթնան կերպով հակ դիմադրող զորքաւորականութեան վրա ներկայ ընդհարման ժամանակ: Սակայն, աւելացնում է լրագիրը, անցած տարաձայնութիւնները, պէտք է յուսալ, մոռացված են երկու կողմերից ևս:

—Российский Инвалид—ի մէջ տպված է հետեւեալը. «Հաղորդելով ռուսաց ղեկավարին Տոկիոյում դիւրամատիկական յարաբերութիւնները խզման մասին, եւրոպական կառավարութեան ներկայացուցիչը յայտնեց, որ եւրոպացիներն այստեղեւտե պահում է իր գործողութեան արտաբերութիւնը: Այդ արտաբերութիւնը մի ազգի մօտ, որ անձնապատասխան կերպով իրան կոչված է համարում կուլտուրա հաստատել Հեռաւոր Արեւելքում, արտայայտվեց նրա մէջ, որ առանց հիմքի զարգացրին դիւրամատիկական յարաբերութիւնները և սկսեցին թշնամական գործողութիւններ, առանց պատերազմ յայտարարելու, ընտրելով վերջինների համար, խուլ, գիշերվայ ծածկով թուլ, ռուսական էսկադրի նաւերը վրա, որոնք հանդարտ կանգնած էին Պորտ-Արտուրի արտաբերական նաւահանգիստում: Կուլտուրական պետութիւնների պատմութեան մէջ դեռ չէր տեսնված այդպիսի յանկարծական յարձակման հետեւանքն այն եղաւ, որ կազմից դուրս հանկեցին երկու ռուսաց զորահաւորներ և կրէյսերներ: Սաղաղ տրամադրված Ռուսաստանը, որ ամեն տեսակ ուղիներ էր որոնում վեճի խաղաղ լուծման համար, հանգիստ վերաբերվեց դիւրամատիկական յարաբերութիւնների խզման, հանդարտ, իր գործի և գորութեան գիտակցութեամբ, նա ապաստեց անդրադոն դէպքերին: Եւ հէնց այդ պատճառով ամեն մի ռուսի սիրտը վշտով համակվեց մեր խաղաղ-ովիւստեան էսկադրայի ժամանակաւոր տկարացման պատճառով:

—Новое Время—ի մէջ կարդում ենք հետեւեալ հետազոտող Լոնդոնից յունվարի 28-ից. «Հիւսիս-ամերիկական Միացեալ-Նահանգների կառավարութիւնը ուղարկել է մեծ պետութիւններին շրջաբերական յիշատակագիր, որով առաջարկում է առաջագործութիւն անել Ռուսաստանին և եւրոպային՝ զարգացնել թշնամական գործողութիւնները Մանչուրիայի և Կորէայի առիթով: Այդպիսի յիշատակագիր գոյութեան փաստը պաշտօնապէս հաստատվում է Մի և նոյն ժամանակ, մասնաւոր տեղեկութիւնների համաձայն, Ամերիկան դիմել է մեծ պետութիւններին հարցմունքով, արդեօք կը ցանկանան նրանք գործել միասին Ամերիկայի հետ, առաջարկելով եւրոպային և Ռուսաստանին յարգել Ձիւստաստանի անկախութիւնը և չեղորոշութիւնը պատերազմական գործողութիւնների բոլոր ժամանակամիջոցում: Այսօր Ամերիկան հետագրում է բոլոր պետութիւններին ընդարձակ բացատրութիւն՝ իր գործողութիւնը արգաւանջելու համար:

ԱՐՏՏ-ԲԻՆ ԼՈՒԲԻՆ

—Կ. Պօլից հեռագրում են «Frankfurter Zeitung» լրագրին, որ Բ. Դուռը յունվարի 29-ին, ուղղեց մեծ պետութիւններին մի յիշատակագիր, որի մէջ թուրքաց կառավարութիւնը յայտնում է, թէ պետութիւնների կոնտրօլը Մանչուրիայում իր էական կէտերով

և մանաւանդ քաղաքացիական գործակալների նշանակմամբ, հակասում է թուրքիայի տեսակէտին:

—Թուրքական պաշտօնական շրջաններում խորապէս համոզված են, որ զարման պատերազմ կը ծագի Բոլշակիայի և նոյն իսկ Սեբրիայի հետ: Այդ պատճառով թուրքաց կառավարութիւնը պահում է սահմանադիր վրա 250,000 զօրք, պատրաստ հէնց առաջին կոչին՝ սկսել պատերազմական գործողութիւնները: Պատերազմական վերջին պատրաստութիւնները Բ. Դուռը շտապով կատարում է: Կնքված են պայմանագրեր պարսկական հայկաթիւն համար: Ձանագրան սահմանադիրային կէտերը ուղարկվում են Թուրքիային:

—Պէկինից հեռագրում են, որ մայր-կայսրուհին շատ յուզված է ռուս-եւրոպական պատերազմի առիթով: Նա արդէն կարգադրել է ուղարկել բոլոր իր զբաղաւորութիւնները և թանկագին իրերը երկրի խորքերը և ինքն էլ պատրաստ է մեկնելու: Պէկինի խաժամուստ ամբողջ իրան շատ սպաւնացող կերպով է պահում: Այդ պատճառով անհրաժեշտ կարել կայ ուժեղացնել տարազգի զօրքերի թիւը:

«Frankfurter Zeitung» լրագիրը տպել է Պետերբուրգի իր թղթակցի խոսակցութիւնը Եւրոպացիներին մեծ պետութեան դիւրամատիկական ներկայացուցչի հետ: Դիւրամատը գտնում է, որ Սեպրիայի վրա ընկնում է ներկայ պատերազմի պատասխանատուութեան մեծ մասը, որովհետեւ նա իր խրախույսով և դրուժներով ստիպեց եւրոպային կուր մէջ մտնել: Դիւրամատիկական յարաբերութիւնների խզումն եւրոպային կողմից բացատրվում է մի այլ պետութեան ազդեցութեամբ: Ներկայ ընդհարման մէջ Ռուսաստանը արժանի է ամբողջ քաղաքակիրթ աշխարհի համակրութեան, որովհետեւ նա հանդիսանում է սպիտակ ցեղի ներկայացուցիչ:

—Բ. Դուռը բերանացի պատասխանեց պետութիւնների վերջին յայտարարութիւններին՝ ժամագրման իր կազմակերպութեան մասին Մանչուրիայում, թէ սուլթանն արդէն համաձայնեց ընդունել պետութիւնների մշակված սկզբունքները: Մանչուրիայի ժամագրման կը վերականգնվի կրտսեակի նման: Վերականգնված են նախագիծը ներկայումս արտադրված է և հաղորդված է ժամագրման հրահանգներով: Դիւրամատը գտնում է, որ օգնականներին, Դուր, և նորից, դեռ չէ նշանակում, որ շուտով կիրառործվի ժամագրման իր Բ. Դուռը դեռ շատ առիթներ կը գտնէ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՄԱՏ ԳՐՈՒԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

2 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Բերդիանսկից, Նիժնի-Տադիսկից, Պսկովից, Սուժկից, Կարսից, Բեկեւից, Վլադիմիրից, Կուրսկից, Բորոյսկից, Վիտեբսկից, Մինսկից, Բելոգորսկից, Նովոգորոդից, Գրոնոյից, Կրոնշտատից, Բոստովից (Դոնի վրա), Վլադիկավկազից, Չեկոսլավից, Կամբլովից, Կերչից, Եկատերինովսկից, Մուրոմից, Տոմսկից, Բերդից և Պաւլօգրադից հաղորդում են հայրենասիրական ցուցիչի մասին: Հաղորդում են նուրբաւորութիւնների մասին: Նարոսլավից—քաղաքային խորհուրդը—5,000 և ստորագրութեամբ—6,300 ռ., Նովոգորոդից—5,000 ռ., Դոմսկից—2,000 ռ., Տոմսկից—ստորագրութեամբ 3,000 ռ.:

ԿԵՆՏԻ. Նահանգապետի ընակարանում մի արհեստանոց է շինված գործող բանակի համար սպիտակեղէն պատրաստելու տեղացի տիւրիկների ձեռքով: Տիւրիկներից կօմիտէտ է կազմվել նուրբաւորութիւնների հաւաքելու համար:

ՊԵՆՉԱ. Նահանգապետի կնոջ նախաձեռնութեամբ կազմակերպվել է կանանց կօմիտէտ զինուորական հիւանդանոցների համար սպիտակեղէններ պատրաստելու:

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ. «Սևաստօպոլ» զբոսակիրի նաւապետին փետրվարի 2-ին քաղաքային վարչութեան կողմից Պորտ-Արտուր ուղարկված հեռագրին հետեւալ պատասխանն է ստացվել. «Ես, օֆիցերները և «Սևաստօպոլ» զբոսակիրի զօրքը սրտանց շնորհակալութիւն ենք յայտնում քաղաքային խորհրդին և ձեզ զեղեցիկ բարեմաղթութիւնների համար: Դիմանալով յունվարի 26-ի ականային յարձակմանը և 27-ի ծովային ճակատամարտին, ամբողջ կազմը և զբոսակիրը անփնառ մնացին և սաստիկ ցանկանում են նորից կուր մտնել, որպէսզի պահպանեն Սևաստօպոլի պատմական անունը բարձրացնելու համար և վստահ են, որ ձեր աղօթքները, որոնք բարձրանում են երկինք, այդքան ռուսական արիւն հոսած մի տեղից, կը լավեն և Տէր Աստուածը «Սևաստօպոլ» զբոսակիրը բաղաւորութիւն կը շնորհէ փառանքի յաղթութեան գլխաւոր մասնակիցներին մէկը լինելու»:

ՊՈՐՏ-ԱՐՏՈՒՐ. Յունվարի 27-ին ժամը 11

և 30 րոպէին 15 նաւից կազմված եւրոպական էսկադրան սկսեց Պորտ-Արտուրի ուղղութեամբ շարժուի: Մեր էսկադրան և բերդը պատասխանում էին: Ճակատամարտը տեղի 40 րոպէ: Եւրոպական էսկադրան չը դիմացաւ մեր էսկադրայի աջող կրակին և մանաւանդ բերդի թնդանութիւնին և սկսեց արագ նահանջը: Եւրոպական ծովապետի զբաղակիրը մեծ ֆլասներ ստացաւ: Ականատեսների վկայութեամբ, նշանաւոր ֆլասներ են ստացել և ուրիշ 5 եւրոպական նաւեր: Ծովի կողմից եկած բեռնակիր նաւերի նաւատիւները հաղորդել են, որ տեսել են ծովում երկու կործանվող եւրոպական նաւեր: Մեր կորուստներն են. ծովային զօրքից—2 օֆիցեր վիրաւորված են, որոնցից մէկը թեթեւ որ և մնաց շարքերում. սպանված են—5 զինուոր, վիրաւորված—54. բերդի թնդանութեամբ զինքից 2 զինուոր թեթեւ վիրաւորվել են: Ռուսակոծութիւնը ոչ մի ֆլաս չը տուեց քաղաքին, բերդին և էսկադրային, բայց ազգայն ազգաբնակչութեան վրա, որը շտապով մեկնում է: Ռուսները համարեալ քաղաքի է: Գիշերները երբեք ծովի կողմից լավում են թնդանութիւն ձայներ: Չօրքի և նաւատորմի տրամադրութիւնը գերազանց է: Ռուսակոծութեան ժամանակ փոխարքան «Զօրտօյ» սարի վրա էր: «Новой Край»-ի բեւեւրակներին իրար ձեռքից են խլում: Ազգաբնակչութիւնը հանդարտվում է: Կվանտունի փոքր զօրք ինչեցեւոր փորձ չէ եղել: Ականային յարձակման ժամանակ ֆլասված նաւերի կարկաստները աջող է առաջ գնում: Նիժնի-Տադիսկի: «Բէյտ. գործ.» Եւրոպացիների երկրորդ յարձակման ժամանակ Չեմուլպոյի ճակատամարտում ռուսական պատերազմական երկու նաւերն էլ «Божье, Царя храни» հրնչեցնելով բոլոր ռուսական ուղղակի դէպք եւրոպական նաւատորմը: Գործողութեան այդ կտրիճ ձեռք, չը նայելով նրանց սպաւնացող և անխուսափելի կորստին, այդտեղ գտնվող օտար նաւերի կողմից դուրս կորեց բարձրաւոր խրախուսանք:

ԲԵՐԴԻԱՆՍԿ. Տեղական գիւմազիաների աշակերտների հրաժարվեցին ամեն տարի տըրվող պարբերակներից, խնդրելով նուրբի փողը պատերազմական ժամանակի կարիքների համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Նորին Կայսերական Մեծութեան փետրվարի 2-ին Հեռաւոր Արեւելքի փոխարքայից ստացած ամենահպատակ հեռագիրը. «Ամենահպատակօրէն տեղեկագրում եմ Ձերդ Կայսերական Մեծութեան կրէյսերեան նաւակիրից առաջնորդ առաջին կարգի կապիտան Բէյցէնտէյնից այս րօպէին ստացված հեռագրի ըստնադակութիւնը. «Սահարեան նեղուցի մօտ նաւաբաժինը ոչնչացրեց մի նաւ և երեք ամբողջ օր կատաղի փոխորդիկ և բուրի մէջ էր մնացել 9 աստիճան սառնամանիքի ժամանակ: Թշնամիներ հետ հանդիպում: Մասնաւորութիւնները հեռագրով կը հաղորդեն: Պորտ-Արտուրից գնեւալ-մայր Յուրգի հեռագիրը զլիւսաւոր շտաբին՝ փետրվարի 2-ից. «Չեկուցանում եմ, որ փետրվարի 1-ի ընթացքում Պորտ-Արտուրի գրութեան մէջ ոչ մի փոփոխութիւն տեղի չէր ունեցնում: Ինչօրեք լուր են հաղորդում, որ եւրոպացիները պատրաստվում են զօրք ինչեցեւոր Յիւրգի փոխարքային Մանչուրիայից լուր ստացվեց, որ երեկ սեմիտիտեան գծի Շախեզու կայարանում երեաց մի խաղաղիւ, կեպի զլիւսալ դրած և վերաբերու հազած, դրա համար էլ նրան ընդունել են եւրոպացիներ տեղ. նոյնը հաղորդում են և Սուեանունա կայարանից: Ըստ երեւոյթին, ինչպէս խաղաղութիւնը ցոյց է տալիս, Տատուզօֆի նաւահանգստում ոչ մի եւրոպական զբաղակիր չը կար»:

ՎԱՇԻՆԳՏՈՆ. Ձիւսական Կառավարութիւնը տեղեկացրեց պետական ղեկարարմանին, որ դուրս փախուստի դէպքում ընդհանուր ապրատմութիւն տեղի կունենայ, որն ուղղված կը լինի օտարերկրացիների դէմ: Կոտորած կառանաւան, որը կըրող կը լինի չինական զինուորական զօրքի հետ: Միւսից փետրվար 1-ը ուրիշ պատասխաններ չեն ստացվում Գէյի նոտային: Աւստրո-Ունգարիան տրամադրել չէ միանալու նաւ առաջարկին, որովհետեւ շատ թիշ չունի արեւելեան Ասիայի գործերում: Անգլիան ցանկանում է, որ նոտայի նպատակները և խնդիրները աւելի որոշ կերպով պարզարանվեն:

ՍԱՆՖՐԱՆԿ. Չեմուլպոյում 100 հոգուց բաղկացած մի բողոքական չեմուլի վրա յարձակվեցան թուրքական սահմանապահ զօրքերը: Երկարատև ճակատամարտից յետոյ բողոքական փախան, թողնելով այնտեղ 12 սպանվածներ. թուրքերի կողմից 1 հոգի սպանված է և 2 հոգի վիրաւորված:

ՉԻՖՈՒ: («Բէյտ. գործ.»): Անցեալ գիշեր ռուսական էսկադրայի մի մասը դուրս եկաւ Պորտ-Արտուրից:

ՍԱՄԱՐԳԱՆԻ: Մայր-մակիթում հազարաւոր մանկական հասարակութիւնը գիւնդական նահանգապետի և իշխանութեան ուրիշ ներկայացուցիչների ներկայութեամբ, շերմագին աղօթում էր Սպիտակ ծալի առողջութեան և նրա զէնքին յաղթութիւն տալու համար: Ձիւսական նաւը ածում էր ժողովրդական հիմն: Մի յարգված տեղացի ժողովրդի կողմից խոր զգացված մի ճառ ասաց, արտայայտելով սէր և հպատակութիւն Ռուսաստանի Միապետին, որը տուել է տեղացիներին բարօրութիւն և ապաւորութեան իրաւունք միւս բոլոր հաւատարմի հպատակների հետ հաւասար:

ԲԱՍՏՈՎԵՉՆԵՍԿ. Քաղաքը հրատարակված է ուժեղացրած պահպանութեան վիճակի մէջ: ԲՐԻՏԱՆԻ. Հիւսիսային երկաթուղու կայարանի մօտ գնացքներն իրար զարմեցին. 6 հոգի սպանված են:

ՊՈՐՏ-ԱՐՏՈՒՐ. («Բէյտ. գործ.»): Պաշտօնական հաղորդագրութիւնների համեմատ՝ 600 եւրոպացիներ Տալիսկիանի մօտ փոխելուց 410-ին կողակները շարքեցին, իսկ մնացածները վերադարձան նաւերը:

ՊՈՐՏ-ԱՐՏՈՒՐ. (Սեփական թղթակցից) Գերմանական «Հանգա» կրէյսերը, իր վրա առնելով ռուսական օֆիցերների կանանց, եւրոպացիների կողմից անհաւանդութեան հետ թարկվեց: Դա հանգիստնում է իր մի նոր ապացոյց ասիացիների անվայել վարմունքի:

ՊԱՐԻԶ. Պարիզի լրագիրների տեսուչները որոշել են ստորագրութիւն բանալ ռուսական վիրաւորների օգտին:

ՎԱՇԻՆԳՏՈՆ. («Բէյտ. գործ.»): Եւրոպական ղեկարարութեան ստացած պաշտօնական հեռագրում յայտնված է, որ Պորտ-Արտուրի ճանկատամարտում ոչ մի եւրոպական նաւ չէ խուսառեղվել. բայց մի քանիսը ֆլասվեցին և ուղարկվեցին Սասեօ կարկաւորներու համար:

—Ֆրանսիական ղեկարարը հաղորդեց Գէյին, որ Ֆրանսիան հաճութեամբ միանում է նրա առաջարկին՝ Ձիւսաստանի չեղարացման առիթով: Հիւր կայ կարծեւ, որ Ռուսաստանը կը համաձայնվի այդ առաջարկի հետ: Ինչպէս հաղորդում են, Անգլիան նոյնպէս սկզբունքով համաձայնութիւն է յայտնել: Լուրերին նախելով չինական հողի վրա թշնամական գործողութիւնների հրապարակը պէտք է սահմանափակվի միայն Մանչուրիայով:

ՊՈՐՏ-ԱՐՏՈՒՐ (սեփական թղթակցից): Օտար թերթերը հաղորդում են, որ Կորէայի կայսրը տեղափոխվում է Ֆրանսիական ղեկապանաւուն: Եւրոպական կառավարութիւնը տեղեկացրեց Տոկիոյ չինական ղեկապանին, որ եթէ Ձիւսաստան ուղարկվում է չեղորոշութիւնը պահպանել, պարտաւոր է խնամքով պահպանել իր բոլոր սահմանները և զօրք զօրացնել, սկսած Մեծ-Պարսկից: Յունվարի 27-ի գիշերային յարձակման ժամանակ ռուսական թնդանութիւնը հարուածներից կործանվեցին եւրոպական 3 տկանակիրներ: Պատերազմական գործողութիւնների շրջանում կատարեալ խաղաղութիւն է: Անգլիայի կողմից եկած լուրերը համեմատ՝ Ամուրի մօտակայքի կողակները բանակ են հաւաքվում չը տեսնված ոգևորութիւնով և գրօշակներով ման են գալիս գիւղերը, նեղեց թշնամուց վրէժ հանելու ցանկութիւնով վառված:

ՆԱԳԱՍԱԿԻ (Բէյտ. գործ.). «Լոյզ»-ի աստիճանով, եւրոպացիները բռնել են 5 հատ նորվեգիական նաւեր, որոնք քրէված էին ռուս առեւտրականներից:

3 փետրվարի Կիեւի կարմիր խաչի Մարիինակայա համայնքի հոգաբարձութիւնը կազմակերպեց բժշկական խումբ Հեռաւոր Արեւելք ուղարկելու համար: Այդ խումբը կազմված է մի հիւանդանոցից 200 մանկականներով, 5 բժիշկներից, 50 քուրերից, 30 սանիտարներից, դեղատնից, գործիքներից և սպիտակեղէնից:

ՍՕՖԻԱ. (Կառավարչական շրջաններից) Բոլշակիայի բոլոր երկեցիներում մաղթանքներ կատարվեցին ռուսական զէնքին յաղթութիւն պարգեւելու համար: Բողոքական Կարմիր խաչը վճռեց ռուսական Կարմիր խաչի տրամադրութեան տակ զինել 3 բժիշկներ, երեք գթութեան քուրեր և 2 սանիտարներ:

ԼՈՆԴՈՆ. («Բէյտ. գործ.»): Այն հարցապնդումին, թէ արդեօք ի նկատի կալ չեղբ 2ըրջան սահմանի Կորէյում, արտաքին գործերի պետական քարտուղարի օգնականը պատասխանում է, որ այդ հարցը չէ յարուցվել կառավարութեան առաջ: Վալտոն հարցնում է, թէ արդեօք կառավարութիւնը, նկատի ունենալով անդիլական առեւտրական շահերը, ցանա

